NOUVEL HAY MAGAZINE
SANS FRONTIÈRES

Հայաստանի համար առաջնահերթ երեք հիմնական ուղղություններն են՝ խաղաղությունը...

Ուրբաթ, 2 սեպտեմբերի 2022 թ.

Հայաստանի համար առաջնահերթ երեք հիմնական ուղղություններն են՝ խաղաղությունը, կրթությունը, բանակը. Վարչապետն ընդունել է «Ամառային դպրոց» ծրագրի մասնակիցներին

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Ազգային ժողովի «Ամառային դպրոց» ծրագրի մասնակիցներին:

Վարչապետը ողջունել է աշակերտներին, անդրադարձել է կառավարության գործունեությանը, կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, Լեռնային Ղարաբաղի Անկախության հռչակագրին, Անկախության հանրաքվեին և այլ հարցերի:

«Այսօր սեպտեմբերի 2-ն է, երեկ սեպտեմբերի 1-ն էր. շատ կարևոր և սիմվոլիկ երկու օր մեզ համար: Գիտեք, որ 1991 թվականի այս օրը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Շահումյանի շրջանի պատգամավորների համատեղ որոշմամբ ընդունվել է Լեռնային Ղարաբաղի Անկախության հռչակագիր, սեպտմբերի 1-ն էլ՝ Գիտելիքի օրն է: Կարծում եմ, որ այս երկու օրերի հարաբերությունը կամ այս երկու օրերի սիմվոլիկան շատ կարևոր է մեր ապագայի համար: Ինչո՞ւ: Որովհետև մենք, ըստ էության, խոսում ենք մի ժամանակաշրջանի և պրոցեսների մասին, որոնց արդյունքում, ի վերջո, անկախություն է հռչակվել Հայաստանի Հանրապետությունում:

Պետք է ասել, որ մեր պետության հիմնադրման առումով՝ օգոստոսը և սեպտեմբերը շատ մեծ, էական նշանակություն ունեցող ամիսներ են. 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունվել է Անկախության հռչակագիրը, 1991 թվականի սեպտեմբերի 21-ին տեղի է ունեցել Անկախության հանրաքվեն», -ասել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը նշել է, որ նախ շատ կարևոր է իմանալ, ճանաչել և հասկանալ մեր պատմությունը. **«Պետք է հասկանանք՝ ի՞նչ է տեղի ունեցել 1991 թվականի սեպտեմբերի 21-ից առաջ և դրանից հետո, ինչո՞ւ է տեղի ունեցել, և կարողանանք ճիշտ հետևություններ անել, որն ամենևին էլ հեշտ գործ չէ, որովհետև պատասխանները նոր հարցեր են բերում: Այս գործընթացը երբեք էլ չի ավարտվում: Շատ հայտնի ասացվածք կա՝ պատմությունից պետք է դասեր քաղել, բայց ինչ դասեր քաղել: Ամեն ինչից էլ պետք է դասեր քաղել՝ պատմությունից էլ է պետք դաս քաղել, դասից էլ է պետք դաս քաղել, կյանքից էլ է պետք դաս քաղել, քաղած դասից էլ է պետք դաս քաղել: Բայց հատկապես՝ ինչ դաս պիտի քաղենք: Ամենաբարդը դա է, և երևի ամենահաջողակները նրանք են, ովքեր, իրոք, կարողանում են քաղել, որովհետև պատմության դաս չէ, որ մի տեղ դարակում դրված է»:**

Կառավարության ղեկավարի խոսքով՝ իր համար ամենակարևոր հետևությունն այն է, որ պետք է աշխատանքները պլանավորել. **«Ես**

ուզում եմ վերադառնալ 90-ականների սկիզբ և փորձել գտնել նախագիծ, թե արդյոք մենք պլանավորել ենք՝ ինչպիսին ենք ուզում տեսնել Հայաստանը 2000, 2005, 2010, 2015 2020, 2022 թվականներին. այդպիսի նախագիծ մենք, անկեղծ ասած, չենք ունեցել: Հիմա արդյոք մենք ունենք նախագիծ, թե ինչպիսին ենք ուզում տեսնել Հայաստանը 2050 թվականին: 2020 թվականի սեպտեմբերի 21-ին ես ներկայացրեցի Հայաստանի վերափոխման ռազմավարությունը, որը չեմ ասի, բնականաբար, թե կատարյալ փաստաթուղթ է, բայց, համենայնդեպս, դա փորձերից մեկն է պլանավորել, թե ինչպիսին ենք ուզում տեսնել Հայաստանը 2050 թվականին: Եվ կարծում եմ՝ ապագայի պլանավորումը նաև այն է, որ մեզ պետք է օգնի դասեր քաղել անցյալից և այսօր ապրելու էներգիա ստանալ»:

Նիկոլ Փաշինյանն այդ համատեքստում ընդգծել է ապագայի մասին պատկերացումներ ձևակերպելու և ապագայի համար ամենօրյա

աշխատանք տանելու կարևորությունը. **«Ապագան ընդհանրապես շատ պարամետրերից է կախված, բայց ցանկացած գործում, կարծում եմ, պետք է ընդգծել առաջնահերթությունները, որովհետև անելիքներն այնքան շատ են, որ դրանց մեջ միշտ կարելի է խճճվել, և ժամանակն էլ քիչ է պլանավորելու համար: Ուստի շատ կարևոր է ընդգծել առաջնահերթությունը: Եվ եթե ինձ հարցնեք՝ որն եմ համարում առաջնահերթությունն այդ առումով տեսանելի ապագայում Հայաստանի համար, ես 3 հիմնական ուղղություն կնշեի. առաջինը՝ խաղաղությունը, երկրորդը՝ կրթությունը, երրորդը՝ բանակը: Կարող է թվալ, թե առաջինն ու երրորդը հակասում են իրար, բայց իրականում չեն հակասում, որովհետև կառավարության ծրագրի մեջ նաև մենք ընդգծել ենք, որ Հայաստանին ուժեղ բանակ պետք է ոչ թե ագրեսիվ գործողություններ իրականացնելու համար, այլ մեր երկրի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար: Հետևաբար, ինձ համար այսօր առաջնահերթություններն այդ երեքն են: Կրթությունը սիմվոլիկ առումով գտնվում է մեջտեղում, և կարծում եմ, որ կրթությունը և՛ խաղաղության համար, և՛ բանակի, անվտանգության համար ունի կենտրոնական նշանակություն: Մենք նաև կրթության ոլորտում հիմա շատ մեծ բարեփոխումներ ենք իրականացնում»:**

Վարչապետ Փաշինյանն պատասխանել է նաև աշակերտներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերել են, մասնավորապես, պետական կառավարման համակարգին, համայնքների խոշորացմանը, բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներին, ՁԼՄ-ների գործունեությանը: